դիւցազնութեամբ կը ճգնի երաշխաւորել Հայաստանի փրկութիւնը. և արդէն ընդնշմարելով դաշնակցաց վերջնական յաղթանակը, նա մեզ լիալիր զգացումով կը մաղթէ փութով տեսնել Հայոց Ազատութեան արփաւէտ օրը։

Եւ մենք ակնկառոյց այդ ցանկալի օրուան՝ երբ տեսնենք փառապանծ ծագիլն արեգական, ազատն Մասիսի բարձունքէն, պիտի գիտնանք օրհնութեանց և իղձերու բուրումնաւէտ խունկերով մեծարել մեր ազգին գործիչներու առաջնակարգ շարքին մէջ Գթութեան Մարմնացում՝ համեստափայլ Օր. Էմիլի Ռոպինսընը։

Թող վստահ ըլլայ, անգլիացի հայասէր Օրիորդը, որ երբ Հայաստան պիտի դադրի աւերակաց կոյտ մ'ըլլալէ, երբ իր այնքան գորովագին սիրած որբերն և որբուհիները սկսին վերադառնալ դէպի իրենց կործան ու փլատակ տուները, ու երբ մեր հայրենիքին բոլոր մաշապուրծ ու ճողոպրած ցիրուցան բեկորները խուժեն վերականգնելու և վերակենդանացնելու մեր Հայաստանը, չի պիտի մոռցուի, ո՛չ երբեք, կանգնելու երախտագէտ սրտերէ յաւերժական անդրի մը այդ մեծ Հայասէրին և մեծ բարեբարին ի յիշատակ. ու անմեղ մանուկներու բերանները պիտի օրհներգեն իրենց մարտիրոսացած մայրերուն անուան հետ, Օր. Էմիլի Ռոպինսընի անմոռաց անունը....։

Հ. ՆԵՐՍԷՍ

ԱՄԻՐՏՈՎԼԱԹԻ

ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

«ԲԱԶՄԱՎԷՊ»ի ներկայ տարուան Մարտ ամսոյ պրակին մէջ (էջ 101–106) հրատարակած, «Հայ բժշկարաններու համաձայն Ախտաբանական Բառեր» յօդուածիս իբրև ամբողջացուցիչ մաս՝ այսօր ալ կը հրատարակեմ Ամիրտովլաթի Աւգոստ բժշկութեան անունը կրող ընդարձակ և ընտիր բժշկարանին, — որ իմ անձնական սեպհականութիւնս է, — ախտաբանական գլխակարգութիւնը, ուր իրարու ետևէ շարուած են նոյն գործին մէջ ուսումնասիրուած հիւանդութիւններն ու դարմաններ, շատ անգամ իրենց համազօր արաբական («տաճկերէն») և կամ պարսկական անուններով։

Ահա այս գլխակարգութիւնը։

Հոս ալ համառածներու թիւերն իմ կողմէ գրուած են։

1. *Թեփուկ որ ի գլուխն լինի. որ տաճիկն հազազ ասէ. և պարսիկն սապուսայ։*

2. *Սայֆայ ասէ յարապն ինքն այն է որ գլուխն խոցնա՛ և քանչալ լինա՛։*

3. *Որոյ մա՛զն ի վար գա՛ մարդուն. և կամ ճաղատ լինի մարդն այս է։*

4. *Որոյ մազն ճղքի մարդո՛ւն. և կամ անժամ ճերմկի մազն և մաւրուքն։*

5. *Տայու սայլապ. և տայուլ հայայ. բ. ա. հիւանդութիւն է մ՚իսս է։*

6. *Գլխայաւութիւն որ ի տաքութենէ լին(ի). և կամ ի հովութենէ ։*

7. *Գլխացաւութիւն որ ի գինութենէ լինի և կամ ի չորութենէ լինայ։*

8. *Գլխայ ցաւութիւն որ ի յարենէ լինի. և կամ ի պալղամէ լինի մարդուն։*

9. *Գլխացաւութիւն որ ի սաֆրայէ լինի. և կամ ի սավտայէ լինի մարդուն։*

10. *Գլխացաւութիւն որ ի տաք քամու լինի. կամ ի հով քամու լինի։*

11. *Գլխացաւութիւն որ ըղեղին ծածկոյն ուռենալուն լինա մարդուն։*

12. *Գլխացաւութիւն. որ. յ. անուանէ պայգիա՛յ. այս ալ գլխացաւ մի է։*

13. *Գլխացաւութիւն որ ի զախմէ լինի. և կամ ազգի ազգի լուծմանէ լինի՛։*

14. *Գլխացաւութիւն որ ի գինու խումարէ լինի։ և կամ հիւանդին պուհրանէն։*

15. *Գլխացաւութիւն որ ստամոքին թուլութենէն. և ի տաքութենէն. և ի վատուժութենէն է։*

16. *Շաղիղա՛ որ է կէս գլխացաւու-*

թիւն. ի տաքութենէ և ի հովութենէ լինի այս է։

17. Որ՛ գլուխն ի շուրջ գայ։ որ տաճիկն տավվար ասէ այս ցաւուս։

18. Աչաց մթնալն որ խելքն ցրուի։ և տաճիկն այսօր սատար անուանէ։

19. Սարսամ որ ըղեղին ցաւերուն է ինքն ի տաքէ և ի հովէ լինի։

20. Սապաթ և սապաթի սահարի։ որ է շատ քուն լինալն և չի լինալն։

21. Շխուս և ճմութ՛. երկուքն այլ ըղեղին հով ցաւերուն է։

22. Մալայխուլիայ. որ է ինքն խելաց պակասութիւն և խելվութիւն։

23. Ղուտրուպ և մանիան. երկուքն այլ խելվութենէ է որ լինի մարդն։

24. Որ քուն չի՛ լինի. և վասվաս որ է տքնութիւն և ծրի խորհուրդ մարդուն։

25. Որ՛ սիրո՛ տէր լինա. վասն մերձանալոյ։ ինքն լինի ի սավտայէ։

26. Մոռացկոտութիւն. և միտքն չառնու։ զոր ասեն։ և չի պահեն ի միտվին։

27. Քապուս որ է խըպըլիկն. որ գիշերն ի քնուն մէջն լինի մարդոյ ինքն։

28. Ըխտաւորութիւն որ տաճիկն ապըրհաս ասէ որ է ըխտաւորութիւն։

29. Ըխտաւորութիւն ազգ մն այլ՛. որ պարսի(կ)քն ասեն. որ սավտայէ և քամու լինի։

30. Սաքթա՛ որ յանկարծ բռնէ զմարդն. և զետ մեռած լինի։

31. Ֆալիճ. որ է կոմնատն. բ. ցեղ է՛. մէկն ի պալղամէ է. և. ա. ի զարկուց։

32. Թուլութիւն անդամոցն որ տաճիկն ըսթրխա՛ ասէ այս ցաւուս։

33. Թմրութիւն անդամոցն. որ տաճիկն. խատար ասէ այս ցաւուս։

34. Որոյ երեսն ծռի. որ տաճիկն լակուայ ասէ՛ աս, ցաւուս։

35. Թաշանուճ այն է որ մ̃մ անդամքն չորնայ։ և քաշուի ջղերն։

36. Քուզազ որ է թաշանուճէն ազգ մն. և ի մթիլաա՛ որ զետ թաշանուշ է։

37. Ըռաշշա՛. որ է ձեռացն. և գլխուն. և անձին դողալն մարդուն։

38. Բոր և կիծ որ աչացն ի կողն լինի մարդուն այս է։

39. Պուրտ և թաշմ՛ճուր՛. և շա̃յիրայ՛. որ է զարեկն. որ աչացն ի կողն լինա՛ մարդուն։

40. Շաթրա՛. որ այն է՛. որ երկու կողն յիրար կպչի աչացն։

41. Սայֆայ և վարտինաճ. և արտևանունքն աւէլնայ։

42. Քամնա՛ և թութայ և որո արտևանունք վաթի։

43. Սլաք. և շրնախ։ և սուլախ։ որ աչացն ի կողն լինի ինքն։

44. Ղատա՛յ և ղարապ՛. և շպիշ՛. և ղամղամ. որ ի յարտևանունքն լինի մարդուն։

45. Աչացաւութիւն. որ արեան. աւելնալուն և սաֆրային աւելնալուն՛ լինի։

46. Աչացաւութիւն որ ի պալղամին և ի սավտային աւելնալուն լինի։

47. Տարֆա։ որ ի աչքն զախ մն զիպնու՛. և նախնա՛ որ է ըղունկն։

48. Որ՛ աչքն խոցնա. և որոյ ի վեր փչէ. և պսուր լինի։

49. Սապալին և որ՛ աչքն արցուէ՛ շատ. հանապազ մարդուն։

50. Ապիլա՛. և տաղղա՛. որ ի յաչքն է։ և որ նպ անկանի ի յաչքն մարդուն։

51. Սարատան և տուպալա. և թարախ, որ ի. բ. տապաղան լինա՛։

52. Որոյ աչքն ի դուրս գա՛. կամ լման. կամ պակաս գա՛ մարդուն։

53. Աչացն տեսութիւն որ է պտուղ. կամ լաննա՛. կամ նեղնա՛։

54. Ինթիշար։ որ սևին միջի սեն աչացն. մեծ և արձակ լինա։

55. Որ՛ աչացն լուսն վատուժի. ի տաքութենէ կամ ի հովութենէ լինի։

56. Սկիզբն որ ի յաչքն ջուր իջնուլ կամենա՛ մարդուն։

57. Որ գիշերն չի տեսնու որ է հաւկուրն. որ ցերեկն չի տեսնու աչքն։

58. Որ ականջն ի վեր տա. և կամ ուռէց լինի՝ ի տաքէ կամ ի հովէ. լինի։

59. Ականջացաւութիւն ի տաքութենէ կամ ի հովութենէ լինի։

digitised by A.R.A.R.@

60. Զուր որ ականջն մտէ. և կամ ականջն իրք մն շարժի մարդուն։

61. Որո՛ ականջն խոցնա. և ականջին մէջն թարախ գա։

62. Որո՛ ականջն ձայն հանէ. և մէջն քամի լինի ականջին։

63. Խլութիւն և ծանրութիւն ականջին որ ի տաքէ լինի. և կամ ի հովէ։

64. Վ՚ն քթին խոցնալուն. և կամ մէջն քթին վեր տայ մանր։

65. Որո՛ քիթն հոտ չառնու՛ ի տաքէ կամ ի հովէ լինի՛։

66. Որո՛ քիթն հոտի. և նասուր, և կամ սունկ լինի քթին մէջն։

67. Որո՛ քիթն կաթնի. և արունի. որ բռուլյաֆ ասէ տաճիկն։

68. Զուգամ և նուզլա. որ ի տաքութենէ կամ ի հովութենէ լինի մարդուն։

69. Որո՛ պուկներն ի վեր տա՛. և կամ ճղքի. և կամ ուռի մարդուն։

70. Ակռացաւութիւն որ ի տաքութենէ լինի. կամ ի հովութենէ։

71. Որո՛ ակռան փշրի՛ և ի տեղացն ելանէ. ժաժելուն պէս։

72. Որո՛ ակռատկերն հոտի և արունի՛ և սևնա մարդուն։

73. Որո՛ ակռային միսն ուռի. ի տաքութենէ. կամ ի հովութենէ լինի։

74. Բերան ցաւութիւն. և կամ ուռի ՝ամ տեղիքն խիստ։

75. Որոց բերան հոտի որ տաճիկն պահր ասէ՛ և հազաֆ այլ ասէ այս ցաւուս։

76. Որ գիշերն ի քուն չի լինի. և բերնէն ջուր երթայ ի ժի՛ր։

77. Որո՛ լեզուն ուռի ի տաքէ կամ ի հովէ՛։

78. Որո՛ լեզուն ի վեր տա՛. որ տաճիկն զալահ ասէ այս ցաւուս։

79. Որո՛ լեզվին բնութիւն փոխի. և գիրաց մի համ չիմանա իսկի։

80. Որո՛ լեզուն խոցնա՛. և ծանրանա՛. և թուլնայ մարդուն։

81. Որո՛ խոչակն ուռի. և կամ զանկիկն կախվի և իջնու։

82. Որո՛ փոքն ուռի. որ տաճիկն խննախ ասէ այսորս։

83. Որո՛ պուկն ցաւի. ի տաքէ կամ ի հովէ լինի։

84. Որո՛ խոչակն տզրուկ կպչի. և. կամ ոսկր միվի և ծնա։

85. Որո՛ խոչկէն արուն գա՛. և կամ արուն փսխէ մարդն։

86. Հազ որ ի տաքէ կամ ի հովէ լինի մարդուն։

87. Հազ որ ի գիճութենէ կամ ի չորութենէ լինի մարդուն։

88. Ըռուպու որ ի տաքութենէ կամ ի հովութենէ լինի մարդուն։

89. Զաթռիա ինքն ուռէց մն է որ ի թոքն լինի մարդուն։

90. Սիլ որ է թոքին ուռէցն և խոցն. որ լինի առ մարդն։

91. Որո՛ զանկիկն ի վայր իջնու ի տաքէ. կամ ի հովէ լինի։

92. Զաթըլ ճամփ որ է կողին ներքևն լիճի* ցաւիլն։

93. Պարսամ. որ է յարապ լեզուաւ շավսան։

94. Խաֆաղան. որ է սրտին դոդալն և[1] տրփալն և խաղալն մարդուն։

95. Որո՛ խելքն անցնի՛ որ այս ցաւուս տաճիկն դաշի ասէ։

96. Որ զկերակուրն չմարսէ. ի տաքէ կամ ի հովէ լինի։

97. Զհալի կերակուրն ստամոքի վատուժութենէն՝ ի տաքէ կամ ի հովէ լինի։

98. Որ կերակուր չուզէ ստամոքն. և չառնու բառքն բնաւ։

99. Որ կերակուր չուզենա. որ ի ստամոքն խլտ ժողվել լինի։

100. Որ շատ ուտէ և չկշտանա. շահվաթի քալպին ասեն տաճկերէն։

101. Որ կաւ ուտէ՝ կամ հող. և կամ գործելի ի պատերուն։

102. Հայզա՛ որ է պարսիկ լեզուաւ թուխման որ լինի մարդն։

103. Զուրպ որ է ինքն ի փորուն լուծմանէն ա. ազգ մն։

104. Զալաղուլ մատա՛. և գալաղուլ ամա՛. բ.ն այլ փորուն լուծումն է։

---

1. Ուրիշ ձեռքով գրուած։ (Կ. Ֆ. Բ.)

digitised by A.R.A.R.@

105. Ղասայէան. որ է սրտին պղտորիլն. և խառնակելն մարդուն։

106. Որո՛ ստամոքին բերանն խաղա. որ է վաճա ուլ ֆուվատն։

107. Որ ծարաւի և շատ ջուր խմէ մարդն խիստ։

108. Որո՛ ստամոքէն և ի փորուն արուն գա՛ խիստ։

109. Որ փսխէ. և փորն չի լուծի ի տաքէ կամ ի հովէ լինի։

110. Որ շատ թքնու. և կամ ստամոքն քամի լինի։

111. Ցուվախ. որ պարսիկն սակնակ ասէ. որ է հեծկլտալն և հեծկլտուկն։

112. Ստամոք ցաւութիւն որ ի տաքէ կամ ի հովէ լինի։

113. Խոց որ ի ստամոքն. լինի. և կամ արուն. և կաթն պաղի ի մէջն։

114. Սրտացաւութիւն ի տաքէ. կամ ի հովէ. ի չորէ կամ ի գիճէ։

115. Որո՛ ստամոքն ուռի ի տաքէ կամ ի հովէ լինի։

116. Որ խուխ ձգէ. և ի բերանն շատ գիճութիւն լինի մարդուն։

117. Որո՛ լերդն ուռի ի տաքութենէ կամ ի հովութենէ։

118. Որո՛ լերդն ուռի՝ որ երակնուն կալուածնուն. և ճանբուն լինի։

119. Ըսթսխա. որ է այծուիքն որ փորն ուռի մարդուն։

120. Ըսթսխա՛ լահմի. և այն որ ջերմանն տաքութեան յետեն լինա՛։

121. Արաղան որ է դեղնութիւն. բ. ցեղ լինի. դեղին և սև։

122. Փայծաղնա՛ ցաւութիւն ի տաքութենէ կամ ի հովէ լինի։

123. Որո՛ փայծաղն ուռի ի տաքէ կամ ի հովէ լինի։

124. Որ ի փորէն ·արուն երթա. և աղիքն գաներ լինի որ է սահճն։

125. Նիգ որ է զահիրն. որ ի փորն լինի. ի տաքէ կամ ի հովէ լինի։

126. Որ ի փորուն արուն լուծի և կամ ի լերդէն. որ է տուսանտարիան։

127. Մաղասն ցաւ մն է որ գիտենան թէ իրք մն զաղիքն կու խածնէ։

128. Ղուլինճ խիստ ցաւ մն է. որ ի այն աղիքն լինի ու խուլին ասեն։

129. Էլայօս ցեղ մն ղուլինճ է որ պատմէ թէ ա̅ծ օգնէ՛։

130. Ճիճի յերկան և մանր. և տափակ. որ ի յաղիքն լինի և ի փորն։

131. Պավասիր որ է սունկն և թութ որ ի նստատեղն լինի։

132. Նասուր որ լինի ի նստատեղն. և որ ծեծած լինի. և ուռէց լինի ի նստատեղն։

133. Որո՛ նստատեղն խոցնա. և կամ երկին բերանն բացվի։

134. Որո՛ նստատեղն ուռի՛. կամ թուլնա՛. և կամ դուրս գա՛. կամ կծա՛։

135. Իրիկամացաւութիւն ի տաքէ կամ ի հովէ լինի։

136. Որո՛ իրիկամն ուռի. ի տաքէ կամ ի հովէ լինի։

137. Որո՛ իրիկամն խոցնա. և արուն և թարախ գա՛ ի ճըճին ծարէն։

138. Բարակ քար և աւազն որ յիրիկամն ընձայի մարդուն այս է։

139. Որ ի հալաբուշտն խոց լինի և կամ ի մէջն քար ընծայի։

140. Որո՛ գոզն կաթէ՛ որ տաճիկն սալասուլ պավլ ասէ։

141. Որո՛ գոզն կապի որ տաճիկն յօսրըլ պավլ ասէ։

142. Որ կամա՛ և յակամ ի տեղն գոզէ. ժմու և անժամու։

143. Որո՛ հալաբուշտն ուռի ի տաքէ. կամ ի հովէ լինի։

144. Որո՛ արուական անդամն կանկնման մնա՛. և ժամ մի չկենա՛ ի մերձաւորութենէ։

145. Որ արանքն թո(ւ)լնա. և սերմն վաթի անդադար և անպատճառ։

146. Որո՛ արանքն ուռի՛ ի տաքէ կամ ի հովէ լինի։

147. Որո՛ արանքին ծայրն այրի ի տաքէ կամ ի հովէ լինի։

148. Որ չուզենա՛ մերձաւորութիւն առնէ՛. կամ տաքէ՛ կամ ի հովէ՛։

149. Որո՛ ձուն ուռի. ի տաքէ. կամ ի հովէ լինա՛։

digitised by A.R.A.R.@

150. Այն քամին որ փաթխ ասեն. կամ յաղիքն լինի ի ձվերն մարդուն։

151. Որ՛ արանքն խծկի. որ տաճիկն չխթինաթըլ տամս աւէ՛ որ գէտ ըխտաւորութիւն է՛։

152. Որ կնկան հայգ բացվի. որ տաճիկն թարաֆի տամս աւէ՛։

153. Որ՛ հայգն այլվի կապէ՛. որ տաճիկն. իհթիպասի տամս աւէ՛։

154. Որ՛ արգանտն ուռի. կամ ի տաքէ՛ կամ ի հովէ՛ լինի։

155. Որ՛ արգանտին մէջն խո՛ց լինի. համ սարատան։

156. Որ՛ արգանտն ի վեր տա՛. կամ սունկ լինի ի մէջն։

157. Ըոինճիեայ. ցաւ մն է որ կանայքն. գիտենան թէ՛ փորն աւծ կա՛։

158. Որ՛ արգանտն ի դուրս գա՛. և շրջի. կամ գինանայ խիստ։

159. Կին որ զտղան ձգէ՛. կամ քամի որ ի յարգանտն լինայ։

160. Կին որ տղա՛ չբերէ՛. կամ յերկնէն լինի կամ ի կնոջէն լինա՛.

161. Կին որ դժար ծնանի. կամ ի փորուն չելնէ տղան և մեռնի։

162. Որ՛ ծիծն ուռի. կամ ի տաքէ՛ լին(ի) կամ ի հովէ՛ լինի։

163. Որ՛ ծիծն ցաւի կամ կաթն ի մէջն կապի. և չգայ։

164. Կոնակցաւութիւն. որ ի տաքէ լինի. կամ ի հովվէ։

165. Վասն կզութեան. որ տաճիկն. հասպա՛ աւէ այս ցաւուս։

166. Ցերղնիսա՛. որ է ինքն ցաւ մն. ճոնէն. մինչև ի կրունկն մարդուն։

167. Ոսկրա՛ցաւութիւն որ է՛ ֆաճաըըլ մաֆա՛սէլն։

168. Նիկրիս որ ի տաքէ՛ լինի կամ ի հովէ՛ լինի այս ցաւս առ մարդն։

169. Տավալի և տայուլֆիլ. երկուքն այլ ի յոտքն լինի. մարդուն։

170. Նախունխաւր որ ըղունկն կերվի և գէտ երվշտա՛ ի դուրս ելանէ՛։

171. Որ՛ ձեռքն և ոտքն ճղքի. և կամ ի ցրտուն մխի։

172. Ման որ է քալաֆն. և պարաշն. և նամաշն. և քանճիտայ։

173. Ղուպա՛ և թուսա՛, և շիրինա՛. որ տաճիկն չարա՛ աւէ։

174. Խոր և քոս[1] կամ դալար լինի և կամ չոր և կամ քերվի խիստ։

175. Որ շատ քրտնի. և կամ չքրտնի մարդն բնաւ։

176. Թեփուկ և ոջիլ և անիծ. որ ի մարդուն մազին տակերն ընկնի։

177. Վասն պիսակին. որ է՛ փիսն. և սև և խտղկ պահաղին որ լինա՛։

178. Կոծիծ. որ է սլուլն և մուտի որ տաճիկն հասաֆ աւէ։

179. Բշտեր և է ինքն ճատարի և վարդ և քութէշ և ծաղիկ։

180. Աթէշ ի փարսի և պսուր որ անձն ի վեր տայ։

181. Հումրան ուռէց է՛ և խորան խոց է՛ որ կերվի։

182. Գողութիւն. բ. ցեղ է. մէկն այրած սաֆրայէ. և մէկն սուր սավտայէ։

183. Որ՛ երեսին գոյնն փոխի. կամ արենէ՛ կամ ի յաւղէ՛։

184. Սարա՛տան. բ. ցեղ է. մէն խոց է. և մէկն պինդ ուռէց է։

185. Ուռէց որ ի պալղամէ՛ լինա՛. և ի սավտայէ՛ լինա՛։

186. Ուռէց որ ի յարենէ՛ լինա՛. կամ ի սաֆրայէ՛ լինա՛ առ մարդն։

187. Խոզք որ է՛ խանա՛զիրն. և սուլայան որ ի յանձն լինա՛։

188. Տայուն որ է՛ խիեարուկն. և տուպայլա՛. որ յանձն լինա՛։

189. Վասն մկնատամին. և կավարսին և բշտին և քամուն։

190. Ամէնաւրեայ, ջերմն. որ ի բարկանալու և ի հոգսէ լինի։

191. Ամէնաւրեա՛ ջերմն որ ի շատ ուտելու լինի. և քաղցենալու լինա՛։

192. Ամէնաւրեա՛ ջերմն որ ի տրտմութենէ և ի հոգսէ՛ և ի շատ ցաւոց լինա՛։

193. Ամէնաւրեա՛ ջերմն. որ կամ ի խիստ շողէ՛ լինի. կամ ի խիստ ցրտէ՛ լինի։

194. Ջերմն որ ի փորուն լուծմանէն յետև լինի. և զուգամէ՛ և նուզլայէ՛ լինի։

---

1. Ուրիշ ձեռքով գրուած։ (Կ. Ց. Բ.)

digitised by A.R.A.R.@

195. Ջերմն որ ի տաքութենէ լինի և ի ցաւոց և ի խիստ ուռէցէն։

196. Երկու ջերմն մէկն դիպլադիմ աւսեն. և մէկին դիպնամիպայ ասեն։

197. Մուսպիղա ջերմն. որ ի տաքութենէ լինի. և կամ ի հովութենէ՛։

198. Ջերմն ի ժիր որ է մուհրիղա. և ջերմն այլ շատրլղիպ։

199. Վասն վապային ջերմանն. և ջերմն որ ի հիւանդութենէն յետև լինա՛։

200. Վասն հալ և մաշ ջերման որ է տիղն և նիքն. գ. ցեղ է՛։

201. Ջերմն. ե. աւրեա՛. և գ. աւրեա՛. և ժա՛. աւրեա՛. լինի առ մարդն։

202. Ըռէշպալխի խոց մն է՛ որ նոր լինի համ հին լինի խոցն։

203. Կրակին այրածին. կամ եղին և կամ ջրին ի մարդն այս է՛։

204. Վասն աւձա՛հարի և կարճա՛հարի և մեղա՛հարի։

205. Որ կատղած շուն խածանէ՛ զըմարդն և կամ չի լինա՛ կատղած։

206. Դեղ մահա՛ցու որ տաք և կամ հով լինի. որ մարդ ուտէ՛։

207. Դեղ մահա՛ցու. և սպանող որ կամ տաք և կամ հով լինա՛։

208. Դեղ մահացու. կամ ըսպանող. որ տաք լինի կամ հով։

Այս գլխակարգութեան կը կցեմ «Բազմավէպ»ի մէջ հրատարակուած վերոյիշեալ յօդուածիս հետեւեալ սրբագրութիւնները, նշանակելով իրենց հատուածթիւերը միայն։

9. Dyspnée = عسرت نفس, *իսկ* خفقان = Palpitation.

17. *Բուն բառն է՛* Dartre, *իսկ միւսները կասկածելի են։*

24. Paralysie*ի տեղ կարդա՛* Hémiplégie, *արաբերէն ֆալիճ։*

25. Paralysie du nerf facial*ի տեղ կարդա՛* Hémiplégie faciale, لقوه.

29. Symblépharon.

36. *Ջնջէ՛* Ascite *բառը։*

42. Phtiriase*ի տեղ կարդա՛* Pellicule.

45. *Բուն բառն է՛* Obnubilation. *միւսները ջնջէ։*

46. Névralgie du cerveau*ի տեղ կարդա՛* Imbécilité.

47. ثبات*ի տեղ կարդա՛* سبات = Assoupissement, (Cataphora).

48. Insomnie*ի տեղ կարդա՛* Assoupissement carotique, *արաբերէն սէբաթը սեհրի։*

53. = Engourdissement, *արաբերէն խադար։*

54. Tétanos.

58. Épiphora.

59. *Աւելցուր նաև՛* Cataracte?

61. Hépistaxie*ի տեղ կարդա՛* Épistaxis.

62. *Ջնջէ՛* Punaisie *բառը։*

64. *Ջնջէ՛* Muguet *բառը, և աւելցո՛ւր* قلاع.

74. Vomissement*ի տեղ կարդա՛* Nausée.

114. Dartre*ի տեղ կարդա՛* Impétigo.

Պարիս Կ. Ց. ԲԱՍՄԱՋԵԱՆ

Մեր Բազմավէպի ընթերցողաց ծանօթ է արդէն Ժան Էքարի համբաւաւոր դէմքը (տ. Յունիս–Յուլիս 1917) եւ իր ունեցած մեծ համակրանքը մեր Ազգին հանդէպ, զոր արտայայտեց իր նշանաւոր *Հայաստան* ոտանաւորին մէջ։ Վերջերս խմբագրութեանս խնդրանքին հետեւանքով՝ գրեց մեզ համար նոր քերթուած մը, զոր հոս կը հրատարակենք, ուր ցոյց կու տայ իր անկեղծ սէրը մեր հայրենեաց հանդէպ ու անխախտ հաւատքը՝ մեր ազատութիւնը ձեռք ձգելու մասին.... Ոտանաւորիս հայերէն թարգմանութիւնը ուրիշ առթիւ կը հրատարակենք։ Հայասէր մեծ Բանաստեղծին՝ մեր անկեղծ շնորհակալիքը։ ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@